Տեղեկանք

«Պետական տուրքի մասին» օրենքի 19. 6-րդ հոդված

Հոդված 19.6.	«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար	բազային տուրքի չափով, եթե սույն օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ
2.Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար	բազային տուրքի 1400-ապատիկի չափով
3. ԱՏԳ ԱԱ 252310000 ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով

4. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ և և միջազգային պայմանագրով նախատեսված երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույքաչափը)	բազային տուրքի 160-ապատիկի չափով
5.«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, , բացառությամբ ԵԱՏՄ և և միջազգային պայմանագրով նախատեսված երկրների(մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույքաչափը)	բազային տուրքի 800-ապատիկի չափով
6.«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, , բացառությամբ ԵԱՏՄ և և միջազգային պայմանագրով նախատեսված երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույքաչափը)	բազային տուրքի 1000-ապատիկի չափով